



Կ Ա Ն Ա Ն Ց ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Համալսարանական կրթությանը կանայք»
լրատուի հավելված

ՀՈՒԼԻՍ, 2011, №7

ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱԶՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ասոցիացիայի քաղաքացիական նախաձեռնությունների մարզային կենտրոնները գործում են «Կանանց շարժումը հազարամյակների խաչմերուկում. նոր մարտահրավերներ և ռազմավարություն» ծրագրի շրջանակներում:

Ծրագրի գլխավոր նպատակն է Ասոցիացիայի և նրա մասնաճյուղերի հետագա ինստիտուցիոնալ զարգացումը, նրանց՝ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտների աշխատանքի արդյունավետությունը, ինչպես նաև գեներային հավասարության հասնելու, ժողովրդավարական փոփոխությունների գործընթացի վրա նրանց ազդեցության բարձրացումը:

ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԵՎ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՎԱԿՈՒՏԵԼ Է ՆՈՐ ՓՈՒԼ



Չարգազրույց Կոտայքի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի համադասող Անահիտ Աղոյանի հետ

իրականացնում է իր առջև դրված նպատակները, այն է՝ նպաստել Հայաստանում ժողովրդավարական, քաղաքացիական հասարակության կայացմանը, աջակցել մարդու իրավունքների պաշտպանության գործընթացներին, կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը:

Գործունեության գրեթե 6 տարիների ընթացքում կենտրոնը որոշակի առաջընթաց է ունեցել, էապես բարձրացել է նրա հեղինակությունը տարածաշրջանում:

Ասոցիացիայի՝ մարզում գործող մասնաճյուղերի նախագահների հետ պարբերաբար անցկացվող հանդիպումների ու քննարկումների ժամանակ կենտրոնի գործունեության վերլուծությունը օգնում է օբյեկտիվորեն գնահատելու կատարված

աշխատանքի արդյունքները, տեսնելու բացթողումները, ավելի վստահ զարգացնելու ու տարածելու հաջողված նախաձեռնությունները, նախանշելու հետագա անելիքները:

Ավանդական են դարձել աշխատանքային հանդիպումները տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ՝ համատեղ գործունեության, տարածքում գործող հասարակական կազմակերպություններին հնարավոր աջակցություն ցույց տալու խնդիրների քննարկման նպատակով:

Կենտրոնի գործունեությունը մարզում նպաստել է կնոջ դերի և նրա ինքնագնահատման նկատելի բարձրացմանը: Մեծացել է քաղաքացիների հետաքրքրությունը Ասոցիացիայի գործունեության նկատմամբ և այն կանանց թիվը, որոնք ցանկություն

- Քաղաքացիական նախաձեռնությունների մարզային կենտրոնները ձևավորվել են 2005 թ. հոկտեմբերին: Ինչպե՞ս կրնու՞թազրեք Ձեր կենտրոնի գործունեությունն անցած տարիներին:

- Կոտայքի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնը շարունակական գործունեությամբ հետևողականորեն



են հայտնում անդամակցելու Ասոցիացիային:

Այսօր արդեն կարող ենք արձանագրել, որ կենտրոնը դարձել է մարզում ուժեղ ցանցային կառույց:

Ասոցիացիայի ստեղծման 15-

մեկն է: Ինչպես ցույց է տալիս փորձը, լիդերության դպրոցների դասընթացներն ապահովում են ոչ միայն գիտելիքների խորացում, հմտությունների ձեռքբերում, ինտեգրում ժամանակակից կյանքին, այլև նպաստում են

նաչված կազմակերպության անդամ:

Մարզում հաջողությամբ է իրականացվում նոր ուսուցանողների խմբի ձևավորումը: Նոր ուսուցանողների բազան հիմնականում համալրվում է մասնաճյուղերի նախագահներից, մասամբ նաև մասնաճյուղերի ակտիվից, որոնք տարիների աշխատանքի շնորհիվ ունեն իրենց նախընտրած թեմաները, կարողանում են հանդես գալ որպես պարապմունքավարներ: Ուսուցանողների բազան լրացվում է նաև փոքր դրամաշնորհային ծրագրերի միջոցով: Այդ ծրագրերում ընդգրկված մարդիկ հաջողությամբ իրականացնում են ոչ միայն կազմակերպչական աշխատանքները, այլև հանդես են գալիս որպես պարապմունքավարներ: Լինելով երիտասարդ՝ նրանք նոր շունչ ու եռանդ են հաղորդում մատուցվող թեմաներին:

Մեր կարևոր նախաձեռնություններից են համարում նաև բնակչության տարբեր խմբերին կանանց վիճակի բարելավմանն ուղղված միջազգային փաստաթղթերի և ՀՀ օրենսդրական ակտերի ներկայացմանն ուղղված գործունեությունը: Կենտրոնը, համագործակցելով մասնաճյուղերի հետ, այդ փաստաթղթերին և Հայաստանում դրանց դրույթների իրականացման ընթացքին նվիրված բազմաթիվ սեմինարներ ու կլոր սեղաններ է անցկացրել մարզի տարբեր բնակավայրերում՝ քաղաքներում և գյուղերում: Բոլոր լսարաններում հետաքրքրությունն այդ փաստաթղթերի նկատմամբ բավական մեծ է, շատերն են խոստովանում, որ մինչ այդ իրազեկ չեն եղել հատկապես միջազգային փաստաթղթերին, և շատ կարևորում են դրանց ծանոթությունը: Կարծում են՝ այս հե-



ամյակին նվիրված միջոցառումների շարքը ցույց տվեց, թե որքան մեծ է հասարակության և իշխանական կառույցների վստահությունը Ասոցիացիայի նկատմամբ: Ուստի մեծ է նաև պատասխանատվությունը, որը դրված է Ասոցիացիայի և նրա կառույցների՝ կենտրոնների և մասնաճյուղերի վրա: Ասոցիացիայի կուտակած վստահության մեծ կապիտալը ենթադրում է կազմակերպության ազդեցության մեծացում հատկապես քաղաքական որոշումների կայացման վրա և՛ բարձրագույն իշխանության, և՛ տեղական ինքնակառավարման մակարդակում:

Այս միջոցառումների շարքից հետո Ասոցիացիայի և նրա կառույցների գործունեությունը թևակոխեց նոր փուլ:

- Կենտրոնի նախաձեռնություններից ո՞րը կառանձնացնեիք:

- Կոտայքի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնը խիստ կարևորում է կանանց լիդերության դպրոցների անցկացումը, որն էլ կենտրոնի հիմնական նախաձեռնություններից

շրջանավարտների որակների փոփոխությանը: Դպրոցի պարապմունքների անցկացման ձևաչափը, դրանց ընթացքում հաղորդվող գիտելիքների համախումբը մարդու մեջ ձևավորում են այլ մոտեցումներ, քաղաքացիական դիրքորոշում և ձգտում կիրառելու դրանք ամենօրյա կյանքում: Վերջնական արդյունքում լիդերության դպրոցներն իրենց ընդգրկման սահմաններում ձևավորում են քաղաքացիական հասարակություն:

Կանանց լիդերության դպրոցներ են անցկացվել Հրազդանում, Աբովյանում, Եղվարդում, Նոր Հաճընում, Չարենցավանում: Ներկայումս կազմակերպական աշխատանքներ ենք տանում նաև Բյուրեղավանում լիդերության դպրոց անցկացնելու ուղղությամբ:

Լիդերության դպրոցների անցկացման արդյունքում մասնաճյուղերն ուժեղանում են: Խիստ կարևոր է նաև այն, որ շատ նոր մարդիկ են ցանկություն հայտնում անդամագրվելու Ասոցիացիային, դառնալու ճա-



տաքըքրությունը տվյալ նախաձեռնության կարևորության և արդյունավետության ամենահամոզիչ վկայությունն է:

- Որքանո՞վ է հաջողվում ապահովել մարզում Ասոցիացիայի մասնաճյուղերի համագործակցությունը և նրանց գործունեության համակարգումը:

- Նախ ցանկանում եմ նշել, որ Ասոցիացիայի՝ մարզում գործող մասնաճյուղերը իրապես դարձել են քաղաքացիական հասարակության ինստիտուտներ և համապատասխանում են այդ ինստիտուտներին ներկայացվող պահանջներին ու չափանիշներին: Այդ է վկայում մասնաճյուղերի օրեցօր աճող ազդեցությունը համայնքներում և մարզում ընթացող զարգացումների վրա, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերմունքը մասնաճյուղերի նկատմամբ և այդ մարմինների ղեկավարների պատրաստակամությունը համագործակցելու մասնաճյուղերի հետ:

Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնը ձգտում է իր հետևողական և նպատակասլաց աշխատանքով նպաստել մասնաճյուղերի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, կենտրոնի և մասնաճյուղերի համատեղ աշխատանքի կատարելագործմանը: Մարզի բոլոր մասնաճյուղերի ընթացիկ տարվա գործունեության ծրագրերը քննարկվում են նախ կենտրոնում, դրանց նախագահների հետ, որից հետո նրանք կազմում են մասնաճյուղի տարեկան աշխատանքային ժամանակացույցը և քննարկում այն մասնաճյուղում գրեթե ողջ կազմի մասնակցությամբ ու որոշում տվյալ տարվա իրենց առաջնայնությունները:

Քաղաքացիական նախաձեռնությունների մարզային կենտրոնին կից գործող խորհուրդը, որի կազմում ընդգրկված են բոլոր մասնաճյուղերի նախագահները, իր նիստում ընտրում է ընթացիկ ժամանակաշրջանում մասնաճյուղերում անցկացվելիք միջոցառումները, սեմինարների և կլոր սեղանների թեմաները, ինչպես նաև այն մասնաճյուղերը, որտեղ պետք է անցկացվեն կանանց լիդերության դպրոցներ:

Թե՛ կենտրոնը, թե՛ մասնաճյուղերը յուրաքանչյուր գործ կատարում են մեծ պատասխանատվությամբ և ճշգրտությամբ: Աշխատանքի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի արգասիք է մասնաճյուղերի համալրումը նոր մարդկանցով, ընդ որում նկատվում է երիտասարդ անդամների ներգրավվելու միտում: Այս տարվա ապրիլին մասնաճյուղ է ստեղծվել Բյուրեղավան քաղաքում, որին արդեն անդամագրվել է 20 մարդ:

Օրեցօր բարձրանում է Ասո-

ւությունը: Մարզի մասնաճյուղերն արդեն ամբողջովին ինտեգրվել են իրենց համայնքների կյանքին, և գրեթե չկան համայնքային միջոցառումներ, որոնցում Ասոցիացիայի անդամներն ընդգրկված չլինեն և չունենան կարևոր դերակատարում:

Ավանդույթ է դարձել նաև համագործակցությունը մարզում գործող այլ հասարակական կազմակերպությունների հետ: Մասնակցությունը միմյանց կազմակերպած միջոցառումներին, համայնքում առկա հիմնախնդիրների համատեղ քննարկումը նպաստում են հասարակական սեկտորի հզորացմանն ու նրա դերի բարձրացմանը:

Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնը համագործակցում է մարզային ՋԼՄ-ների հետ: Շնորհիվ այդ համագործակցության զանգվածային լրատվության շատ միջոցներ արդեն կարողանում են ճիշտ հնչեցնել գեներային հիմնախնդիրները՝ դրանով իսկ նպաստա-



ցիացիայի՝ մարզում գործող մասնաճյուղերի՝ որպես ամբողջական միավորի աշխատանքի արդյունավետությունը, և նկատելիորեն աճում է մասնաճյուղերում ընդգրկված կանանց ակտիվությունն ու քաղաքացիական նախաձեռնություններով հանդես գալու պատրաստակա-

վոր պայմաններ ստեղծելով հիմնախնդիրները քննարկման փուլից լուծումների որոնման փուլ տեղափոխելու համար: Մարզում գործող լրատվամիջոցները բավական հետաքրքրված են Ասոցիացիայի գործունեությամբ, իսկ դրանց մի մասը խորությամբ ծանոթ է Ասոցիա-



ցիայի առաքելությանն ու նպատակներին՝ նպաստելով հասարակության մեջ գենդերային զգայնության բարձրացմանը:

- Դուք նշեցիք տեղական ինքնակառավարման մարմինների պատրաստակամությունը համագործակցելու Ասոցիացիայի մասնաճյուղերի հետ: Արդյոք կարելի՞ է կայացած համարել Ձեր մարզում իշխանության տեղական կառույցների և հասարակական սեկտորի սոցիալական գործընկերությունը:

- Վստահաբար կարող եմ ասել, որ մարզի մասնաճյուղերի և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությունը հասել է որակապես նոր մակարդակի՝ նպաստելով համայնքների կյանքի փոփոխությանը: Հատկապես կուզեի նշել եղվարդի և Նոր Հաճընի մասնաճյուղերի փորձն իրենց քաղաքապետարանների հետ համագործակցության ուղղությամբ:

Մենք գիտակցում ենք, որ մասնաճյուղերի աշխատանքների արդյունավետության բարձրացման հիմնական ուղիներից մեկը համայնքների ներքին կյանքին ինտեգրվելն է, ուստի մարզի բոլոր մասնաճյուղերը փորձում են վեր հանել իրենց համայնքի հիմնախնդիրները, լուծումներ առաջարկել, մասնակցել գործնականում այդ խնդիրների լուծմանը: Նման մոտեցումը և՛ արդյունավետ է, և՛ արդիական:

Ասոցիացիայի մասնաճյուղերի շատ անդամներ դարձել են պրոֆեսիոնալ հասարակական գործիչներ և գրագետ ձևով մասնակցում են հանրային խնդիրների լուծմանը:

Արդեն բավականին կայուն և գործնական է դարձել քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի և մարզպետարանի համագործակցությունը: Այդ է վկայում նաև այն փաստը, որ մարզպետարանին կից ստեղծ-

ված գենդերային հանձնաժողովում մարզպետարանի աշխատակիցների նախաձեռնությամբ ընդգրկվել են Ասոցիացիայի Հրազդանի մասնաճյուղի նախագահ Նինա Հակոբյանը և Կոտայքի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի համադաստղը:

Իհարկե, մարզում իշխանական կառույցների և հասարակական սեկտորի սոցիալական գործընկերությունը չի կարելի լիովին կայացած համարել, բայց դրա համար որոշ լուրջ նախադրյալներ արդեն ստեղծվել են: Եվ կարծում եմ՝ ամենակարևոր նախադրյալը երկուստեք գիտակցումն է, որ նման գործընկերությունն անհրաժեշտ է երկրում ժողովրդավարության զարգացման, քաղաքացիական հասարակության կայացման համար:

Հարցազրույցը վարեց
Փայանե Մերոյանը

Կոտայքի մարզի Ջովունի գյուղի դպրոցում անցկացվել է սեմինար «Կանանց մասնակցությունը հասարակության զարգացման գործընթացներում՝ որպես ժողովրդավարացման նախադրյալ» թեմայով, որին մասնակցել է 23 ուսուցիչ:

Պարապմունքները՝ «Գենդերը՝ որպես սոցիալ-մշակութային հարացույց», «Գենդերային հավասարակշռությունը՝ որպես հասարակության զարգացման և ժողովրդավարացման նախադրյալ», «Կանանց քաղաքական և քաղաքացիական մասնակցությունը» թեմաներով, անցան ակտիվ մասնակցության և շահագրգիռ քննարկման մթնոլորտում:

Հետաքրքիր է, որ նման սեմինարներում, որպես կանոն, առավելապես ակտիվ են և մեծ հետաքրքրություն են դրսևորում տղամարդ մասնակիցները: Այս սեմինարին մասնակցած տղամարդիկ առաջարկեցին նմանօրինակ հանդիպումները դարձնել շարունակական և նախատեսել նոր քննարկումներ:

Սեմինարի գրեթե բոլոր մասնակիցներն ընդգծեցին այսպիսի միջոցառումների անհրաժեշտությունն ու կարևորությունը: Նրանցից շատերը հետաքրքրվեցին Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիային անդամագրվելու կարգով:

Չարենցավան քաղաքում «Գենդերային հավասարության ընկալումը մեր հասարակության մեջ» թեմայով անցկացված կլոր սեղանի ժամանակ ներկայացվել են իրավունքների իրավական և փաստացի հավասարությունների՝ հաճախ և գրեթե ամենուր հանդիպող անհամապատասխանությունը, իրավական հավասարությունից փաստացի հավասարության անցնելու մեխանիզմները, այս ասպարեզում առկա միջազգային դրական փորձը և այն Հայաստանում տեղայնացնելու հնարավորությունները:

Հնչած բազմաթիվ հարցերի պարզաբանումը և համատեղ քննարկումն օգնեցին մասնակիցներին լրացնելու իրենց գիտելիքները և պատկերացումները գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ և նկատելիորեն բարձրացրեցին նրանց գենդերային զգայնությունը:



ՀԱՐՑԸ ՀՆՉԵՂՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱՎ ՄԻԱՅՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՋԱՆՔԵՐՈՎ

Շիրակի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի գործունեությունը



Շիրակի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններն են մասնաճյուղերի ուժեղացումը և աշխատանքների ակտիվացումը, նրանց միջև կապի սերտացումը, փորձի փոխանակումը, լիդեր կանանց ցանցի ստեղծումը, կանանց լիդերության դպրոցի նոր հոսքերի կազմակերպումը:

Գյումրու, Արթիկի, Ախուրյանի, Մարալիկի մասնաճյուղերի նախագահների հետ պարբերաբար անցկացվող խորհրդակցություններում քննարկում ենք Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի գործունեության ծրագրերը, ճշտում ենք աշխատանքային ժամանակացույցը և որոնում մասնաճյուղերի համագործակության նոր ձևեր: Մասնաճյուղերի աշխատանքի եռամսյա ժամանակացույցների ներկայացումը կենտրոնին հնարավորություն է տալիս ապահովելու փոխադարձ մասնակցությունը կազմակերպվող միջոցառումներին:

Ասոցիացիայի՝ մարզում գործող մասնաճյուղերի գործունեության արդյունավետության և որակապես նոր աստիճանի հասնելու

վկայություն են համարում այն, որ կազմակերպվող սեմինարներն ու կլոր սեղաններն ուղղված են արդեն ոչ թե սուկ գեներալիս իրազեկության բարձրացմանը, այլ նոր ու լուրջ հիմնախնդիրների, հետաքրքիր հարցադրումների քննարկմանը: Այսպես, Ախուրյանում անցակցվել է սեմինար «Կանայք ունեն բավարար կարողություններ, գիտելիքներ և փորձ րեղական ինքնակառավարման մարմիններում ընդգրկվելու համար» թեմայով, իսկ Մարալիկում կլոր սեղանի թեման էր «Կանանց քաղաքական մասնակցության գեներալիս կարծրափայերը. հասարակական ըմբռնման իրողությունները և «քաղաքականությունը կնոջ գործը չէ» առասպելի վերարտադրությունը»:

Այս տարվա զարմանք Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնը ակտիվ մասնակցություն ունեցավ ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխությունների քննարկման գործընթացում: Մեր նախաձեռնությամբ կազմվեց ուղերձ ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանին և ԱԺ պետաիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանին՝ առաջին ընթերցմամբ ընդունված ընտրական օրենսգրքի նախագծի կապակցությամբ մեր առաջարկություններով, որը Շիրակի մարզում գործող 21 հասարակական կազմակերպությունների ստորագրությամբ ներկայացվեց խորհրդարան:

Իսկ հունիսին Գյումրիում մարզի 18 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվեց «Կրթության ոլորտի գեներալիս հիմնախնդիրները ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձ-

նաժողովի 55-րդ նստաշրջանի համատեքստում» թեմայով կլոր սեղան, որը վարում էր Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ, մակավարժական գիտությունների թեկնածու Ջեմմա Հասրաթյանը, փորձագետն էր ՀՀ ԳԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող, փիլիսոփայության թեկնածու Վլադիմիր Օսիպովը: Նրանք մասնակցել էին Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի գրասենյակում կայացած ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 55-րդ նստաշրջանի աշխատանքներին, ուստի ներկայացրեցին նստաշրջանի աշխատանքները և նրա ընդունած փաստաթղթերը: Կլոր սեղանի ընթացքում վեր հանվեցին նաև հասարակական սեկտորին առնչվող մի շարք սկզբունքային հարցեր համագործակցության, ցանցային աշխատանքի վերաբերյալ:

Կենտրոնը մասնաճյուղերի երաշխավորած թեկնածուների հետ հարցազրույցի հիման վրա Ասոցիացիայի կողմից անցկացվող կանանց լիդերության դպրոցի հերթական հոսքերի մասնակիցների ընտրություն է կատարում, նպաստում նրանց փաստաթղթերի նախապատրաստմանը, ինչպես նաև աջակցություն է ցույց տալիս դպրոցի շրջանավարտներին հասարակական-քաղաքական պրակտիկայի շրջանակներում փոքր դրամաշնորհային ծրագրերի մշակման և դրանց իրականացման հարցում:

Կենտրոնն անմիջական մասնակցություն է ունենում Գյումրիում կանանց լիդերության դպրոցի կազմակերպման գործում: Անցկացված 5 հոսքերի դասըն-



քացներն ավարտել են մարզի ավելի քան 100 ակտիվ կանայք՝ Աստղիացիայի բոլոր մասնաճյուղերի, այլ հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, պետական հիմնարկների աշխատակիցներ: Գպրոցում պարապմունքները վարում են ոչ միայն Աստղիացիայի փորձագետները, այլև Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի դասախոսներ, իշխանության կառույցների ղեկավարներ:

Լիդերության դպրոցի ակնա-

Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնի, «Գոհար», «Կրթության ասպարեզ», «Գյումրու ֆինանսիստների և հաշվապահների միություն», «Ա. Սախարովի անվան կենտրոն», «Համայնքի զարգացման և սոցիալական աջակցության կենտրոն», «Կանայք հանուն զարգացման», «Նոյեմի» «Աջակից» հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Խորհրդի նախագահ ընտրվեց Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի համադաստղը: Հետագայում

ման մասին» օրենքի նախագծի լոբբինգին:

Այս տարվա հունիսին կենտրոնը Գյումրիում անցկացրեց կլոր սեղան «Արդյունավետ կոալիցիաների և ցանցերի հնարավորությունները հասարակական նշանակություն ունեցող հիմնախնդիրների լուծման գործում» թեմայով, որին մասնակցեց 22 մարդ: Կենտրոնի համադաստղը ներկայացրեց հասարակական սեկտորում առկա հիմնախնդիրները և Լիդեր կանանց խորհրդի օրինակով ներկայացրեց նման ցանցերի արդյունավետությունը: Հանդիպման արդյունքում «Նոր լույս» և «Փյունիկ» հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները ցանկություն հայտնեցին միանալու Լիդեր կանանց խորհրդի նախաձեռնությանը և մասնակցելու առաջիկա նիստին:

Կայացել է որոշակի համագործակցություն մարզում գործող շուրջ 20 հասարակական կազմակերպությունների և «Օրինաց երկիր», «Բարգավաճ Հայաստան», Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունների կանանց խորհուրդների հետ:

Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնը հետևողական աշխատանք է տանում մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությունը խորացնելու ուղղությամբ: Վերջերս Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Բորիս Ալեքսանովի հետ կայացած հանդիպման ժամանակ քննարկվել են կանանց լիդերության դպրոցի 5-րդ հոսքի մասնակիցների ընտրության և քաղաքապետարանի հնարավոր աջակցության հարցերը:

Իսկ Շիրակի մարզպետարանի Ընտանիքի, երեխաների և կանանց իրավունքների պաշտպանության բաժնի պետ Լուսինե Գինոսյանի



նու արդյունքները թելադրել են մեզ նախաձեռնել լիդերության դպրոցի դասընթացներ նաև տղամարդկանց համար:

Մարզի առավել ակտիվ հասարակական կազմակերպությունների արդյունավետ համագործակցությունը ապահովելու նպատակով և ընդառաջ գնալով կանանց լիդերության դպրոցի 2-րդ հոսքի շրջանավարտների առաջարկությանը՝ Կենտրոնը 2010 թ. մարտին նախաձեռնեց խորհրդակցություն, որին մասնակցեցին շուրջ 20 կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Բուռն քննարկումների արդյունքում որոշվեց ստեղծել լիդեր կանանց ցանց: Ընտրվեց լիդերների խորհուրդ՝ 10 անդամով, որում ընդգրկվեցին Կարմիր խաչի, ՀԱԵ

խորհրդի կազմը համարվեց այլ կազմակերպությունների ներկայացուցիչներով, և այժմ այն ընդգրկում է 15 անդամ:

Խորհրդի անդամները պարբերաբար հանդիպում են, խորհրդակցում, իրենց գործունեության մասին միմյանց տեղեկատվություն տրամադրում, համատեղ ծրագրեր են մշակում և իրականացնում:

Խորհուրդն իր նիստերից մեկում քննարկել է գեներալային քաղաքականության հայեցակարգը, որն ընդունվեց մեծ ոգևորությամբ: Խորհրդի անդամները պատրաստակամություն հայտնեցին նաև աջակցելու հետագայում «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահով-



հետ քննարկվել են մարզպետարանին առընթեր գեղեցիկին հարցերի հանձնաժողովի ստեղծումը և համատեղ անելիքների հեռանկարները: Ներկայացնելով Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի միջոցառումների տարեկան ժամանակացույցը՝ կենտրոնի համադաստղն առաջարկեց համագործակցել, և արդեն իսկ ձեռք է բերվել համաձայնություն համատեղ միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ:

2010 թ. կենտրոնը նախաձեռնեց «Քաղաքը՝ գյուղին. օգնենք Արեգնադեմին» մարզային ակցիան, որի շրջանակներում այս տարվա մարտին Արեգնադեմի գյուղապետ Ադուն Հազրյանի նախաձեռնությամբ անցկացվեց կլոր սեղան մարզպետարանի աշխատակիցների հետ: Բացման խոսքում գյուղապետը նշեց. «Գյուղի հիմնախնդիրներին անդրադարձել են շատերը, սակայն հարցը հնչեղություն ստացավ միայն Ասոցիացիայի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի ջանքերով, որի շնորհիվ այսօր մեզ են միացել նաև Ա. Սախարովի անվան մարդու իրավունքների կենտրոնը և այլ կառույցներ, որոնց միջոցով հույս ունենք լուծել մեր խնդիրները»:

Ադուն Հազրյանի առաջարկությամբ Ամասիայի տարածաշրջանում հիմնադրվեց ռեսուրս կենտրոն, որի գույքը տրամադրեց գյուղապետարանը, իսկ Կենտրոնը ստանձնեց գրադարանը համապատասխան գրականությամբ համալրելու, սեմինարներ և կլոր սեղաններ անցկացնելու, ինչպես նաև տարաբնույթ ակցիաների միջոցով սահմանամերձ գյուղերի հիմնախնդիրները բարձրաձայնելու պարտավորությունը:

Կենտրոնի նախաձեռնություններից էր «Համագային աջակցություն նորածիններին «Օրորոց» ծրագրի շրջանակներում Ախուրյանի, Աշոցքի և Ամասիայի տարածաշրջանների սահմանամերձ գյուղերի նորածին երեխա ունեցող ընտանիքներին օգնության տրամադրումը: Այդ ակցիայի կազմակերպական աշխատանքներում մեզ աջակցեց Արեգնադեմի գյուղապետ Ադուն Հազրյանը, նորածնի հագուստի փաթեթների հանձնմանը ակտիվորեն մասնակցեցին Գյումրու և Ախուրյանի մասնաճյուղերի անդամները: Ակցիայի շնորհիվ նորածնի հագուստի փաթեթ ստացան Ամասիայի 16, Ախուրյանի 8 և Աշոցքի 25 ընտանիքներ:

Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնը մարզի քաղաքացիական հասարակության

այլ կառույցների հետ համագործակցության շրջանակներում համատեղ միջոցառում է կազմակերպել Լիդեր կանանց խորհրդի անդամ «Ագաթ» հատուկ կարիքներով կանանց հասարակական կազմակերպության հետ «Ներառական կրթությունը Շիրակի մարզում» թեմայով: Քննարկվեցին հաշմանդամ երեխաների դպրոցում աղապատացվելու, սոցիալական միջավայրում ինտեգրվելու հարցերը, մասնակցեցին Ասոցիացիայի երիտասարդական թևի անդամները:

Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնը միշտ սերտորեն համագործակցել է մարզում գործող լրատվամիջոցների հետ: Այդ աշխատանքի արգասիքն է կենտրոնին կից ստեղծված մամլո գրասենյակը, որը համալրվում է Ասոցիացիայի հետ համագործակցող, այդ աշխատանքներով հետաքրքրված ու աշխատելու ցանկություն ունեցող լրագրողներով:

Լիլիթ Ասոյան

Շիրակի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի համադաստղ,

Գյումրու պեդագոգական

մանկավարժական ինստիտուտի պարամոնիայի ամբիոնի

դասախոս

Ախուրյանում անցկացվեց սեմինար «Կանայք ունեն բավարար կարողություններ, գիտելիքներ և փորձ փեղական ինքնակառավարման մարմիններում ընդգրկվելու համար» թեմայով:

Սեմինարի փորձագետները՝ Շիրակի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի համադաստղ Լիլիթ Ասոյանը, Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի դոցենտ Արարակ Հովհաննիսյանը, ներկայացնելով կանանց քաղաքական իրավունքները և դրանց իրականացման մեխանիզմները, զուգահեռներ անցկացրեցին կանանց իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմների և միջազգային փորձի միջև՝ ցույց տալով դրանց կիրառման կարևորությունը և նշանակությունը:

Բուռն քննարկում ծավալվեց մարզում կանանց քաղաքական և քաղաքացիական ակտիվության խթանման հիմնախնդիրների շուրջ:

Նշանակալի է, որ նման հանդիպումներին մասնակցելու ցանկություն են սկսել հայտնել նաև տղամարդիկ: Այս սեմինարի մասնակից, Ջրառատ գյուղի դպրոցի զինղեկ Հրանտ Դարբինյանը՝ կարծիք հայտնելով, որ հասարակությունում երբեմն շփոթում են լիդերությունը ակտիվության հետ, նշեց նաև վերջին տասնամյակում շրջապատում նկատելի փոփոխությունները, հատկապես՝ կանանց գործելակերպում:



ԿԱՆԱՆՑ ԼԻԳԵՐՈՒԹՅԱՆ ԳՊՐՈՑԸ ՆՈՐ ԼԻՑՔ Է ՀԱՂՈՐԳՈՒՄ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

2011 թ. մարտի 19-ից մինչև մայիսի 8-ը տեղի ունեցան Կանանց լիգերության դպրոցի 27-րդ հոսքի պարապմունքները, որոնց մասնակցեց 29 կին՝ Ասոցիացիայի տարբեր մասնաճյուղերի անդամներ, «Նոր Լույս» կենտրոն երիտասարդների համար», «Սոցիալական աջակցության համակարգչային կենտրոն», «Շահերի պաշտպանության և աջակցության», «Սևան» երիտասարդական ակումբ», «Աջակցություն իրավական պետությանը» «Հայտուր», «Համայնք և երիտասարդություն», Կանանց հանրապետական խորհուրդ, «Ապագան քոնն է» հասարակական կազմակերպությունների, Հայաստանի հանրապետական, «Բարգավաճ Հայաստան», «Օրինաց երկիր» քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ և մեկական աշխատակից «Էլ Էյ Քընսալթինգ» ՍՊԸ-ից և «Շանթ» հեռուստաընկերությունից:

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ՈՉ ՄԻԱՅՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՐՍԱՑՄԱՆ, ԱՅԼԵՎ ՆՈՐ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԴՊՐՈՑ ԵՆ...



Դասընթացի սկզբում մասնակիցների շրջանում անցկացված հարցումը ցույց տվեց, որ նրանց 76%-ի տարիքը չի գերազանցում 30 տարին: Բոլորն ունեին բարձրագույն կրթություն: Մասնակիցների կազմում էին դպրոցի ուսուցիչներ, բուհի դասախոսներ, տնտեսագետներ, իրավաբաններ, գրադարանավարներ, լրագրողներ, մենեջերներ, ՀԿ-ների աշխատակիցներ, արխիվագետ, սոցիալական ոլորտի աշխատակից, ԱԺ պատգամավորի օգնական:

Դասընթացն անցկացվեց հետևյալ մոդուլներով.

- *Քաղաքական գիտելիքներ*. հասարակության քաղաքական կառուցվածքը, քաղաքացիական հասարակության ինստիտուտ-

ների գործառույթները, քաղաքացիական հասարակության ժողովրդավարական արժեքային համակարգը, հասարակական-քաղաքական երկխոսության մշակույթը, կանանց քաղաքական և քաղաքացիական մասնակցությունը, նրանց դերը համայնքի զարգացման գործընթացում, լիգերության զարգացումը, գենդերը՝ որպես մշակութային և սոցիալական իրողություն, գենդերային քաղաքականության պետական հայեցակարգը:

- *Իրավական գիտելիքներ*. մարդու իրավունքների պաշտպանության ազգային օրենսդրությունը, կանանց իրավունքների պաշտպանության միջազգային իրավապաշտպան համակարգը և գենդերային հավասարության հիմնախնդիրները, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

- *Տնտեսագիտական գիտելիքներ*. հանրապետության տնտեսական ոլորտի զարգացման, տնտեսական և սոցիալական քաղաքականության գենդերային հիմնախնդիրները, զբաղվածության և աշխատանքի շուկայի գենդերային իրավիճակը, գր-

քալացվող տնտեսության զարգացման միտումները:

- *Գիտելիքներ հասարակական-քաղաքական գործունեության տեխնոլոգիաների վերաբերյալ*. հասարակական գործունեության կազմակերպման մեթոդները և ռազմավարական այլաձևերի մասնաճյուղերի, հասարակական շահերի պաշտպանության ժամանակակից տեխնոլոգիաները, արդյունավետ կոալիցիաների ձևավորումը, կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների սոցիալական գործընկերությունը:

Դասընթացի սկզբում և վերջում անցկացված հարցումների համեմատական վերլուծությունը վկայում է, որ մասնակիցների պատկերացումները *հասարակական-քաղաքական, տնտեսական, իրավական հասկացությունների, դրանց բովանդակության, գենդերային հիմնախնդիրների և դրանց էության վերաբերյալ* առավել խորը և ամբողջական են դարձել: Եթե դասընթացի սկզբում նրանք *գենդերը* բնորոշում էին որպես *իրավահավասարություն, խորհրդակցության բացակայություն, սոցիալական սեռ*, ապա դասընթացի վերջում գումարվեց նաև գենդերի ընկալու-



մը որպես սոցիալական դերակատարում:

Ինչ վերաբերում է «ժողովրդավարություն» հասկացության ընկալմանը, ապա ունկնդիրները, ըստ էության, ճիշտ պատկերացում ունեին ժողովրդավարության մասին՝ ինչպես դասընթացի սկզբում, այնպես էլ դրա ավարտին այն ներկայացնելով որպես ժողովրդին պատկանող իշխանություն: Սակայն փոփոխվել էին նրանց մտեցումները մեր երկրում ժողովրդավարության կայացման հարցին: Եթե առաջին հարցման ժամանակ նրանց 41%-ը կարծում էր, որ Հայաստանում ժողովրդավարությունը չկապրուկ է, ապա ամփոփիչ հարցման ժամանակ նման կարծիք է հայտնել ընդամենը

մեկ մասնակից, ինչը վկայում է դասընթացների արդյունքում ժողովրդավարության կայացման վերաբերյալ մասնակիցների առավել ամբողջական, ճիշտ և լիարժեք պատկերացումների ձևավորման մասին:

Դասընթացների արդյունքում փոխվել են նաև մասնակիցների պատկերացումները գեներայի ընդհանրական վերաբերյալ: Եթե սկզբում դրանց անհրաժեշտությունը գիտակցում էր մասնակիցների 56%-ը, որը ևս քիչ չէ, ապա վերջում բոլորն էլ անհրաժեշտ էին համարում գեներայի ընդհանրական կիրառումը՝ նշելով, որ միայն այդ դեպքում հնարավոր կլինի ապահովել կանանց մասնակցությունը որոշումների ընդունման մակարդակում:

Մասնակիցների կարծիքով՝ լիդերության դասընթացները ոչ միայն գիտելիքների հարստացման, նոր մտածելակերպի ձևավորման դպրոց են, այլև անձնային նոր որակների դրսևորման հնարավորություն, ինչպիսիք են համարձակությունը, ինքնավստահությունը, սեփական տեսակետն անկաշկանդ արտահայտելու կարողությունը, ինքնադրսևորումը:

Նարինե Գավթյան

Սոցիալազգային Կանանց լիդերության դպրոցի 27-րդ հոսքի համակարգող, Աշխարհի և սոցիալական հեղափոխությունների ազգային ինստիտուտի կադրերի վերապատրաստման և մասնագիտական ուսուցման բաժնի պետ, «Հայրուր» ՀԿ-ի նախագահ

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԶԵՌՎԵՑ ԴՊՐՈՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ՏԱՆԵԼՈՒ ԿՈՆԿՐԵՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ

Կանանց լիդերության դպրոցի 27-րդ հոսքի պարապմունքները, որոնք ուղղված են կանանց հասարակական, քաղաքական, իրավական գիտելիքների և գեներային իրազեկության, գեներային զգայնության բարձրացմանը, գյուղա-

կան աջակցություն ստացան իրականացման համար: Դրանք էին՝ «Մարզերի կանանց քաղաքացիական նախաձեռնությունները հազարամյակի մարտահրավերների համապատասխանում» ծրագիրը, որն իրականացնում են Համալսարանական կրթությանը

յան ինստիտուտների համագործակցության միջոց» ծրագիրը:

Այդ ծրագրերը շրջանավարտներին հնարավորություն ընձեռեցին դպրոցում ստացած գիտելիքները տանելու կոնկրետ գործողությունների իրականացման ոլորտ, որոնք նպատակաուղղված են կանանց քաղաքացիական և քաղաքական ակտիվության բարձրացմանը, նախաձեռնությունների զարգացմանը և համագործակցության ցանցերի ձևավորմանը, գեներային կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված միջոցառումների կազմակերպմանը:

Ծրագրերի շրջանակներում անցկացվել են երիտասարդ աղջիկների և տղաների լիդերության դպրոցի պարապմունքներ Արտաշատում, կլոր սեդան-քննարկումներ Երևանում, Սևանում ու Գավառում, համաժողովներ Ալավերդիում և Ստեփանավանում, որոնք անցել են ակտիվ բանավեճի ձևաչափով:

Միջոցառումներին մասնակցել են Սոցիալազգային, այլ հասարակական կազմակերպությունների կին լիդերներ, քաղաքական կուսակցությունների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:



բնակ և փոքր քաղաքների կանանց և աղջիկների կարողությունների զարգացմանը, ավարտվեցին ունկնդիրների հասարակական-քաղաքական պրակտիկայի կազմակերպմամբ:

Տարբեր հասարակական կազմակերպություններ և քաղաքական կուսակցություններ ներկայացնող շրջանավարտները համատեղ մշակեցին նախագծեր, որոնցից երկուսը հավանության արժանացան և ֆինանսա-

կանանց Սոցիալազգային Լոռու մարզի Վանաձորի մասնաձյուղի, Գեղարքունիքի մարզի Սևանի մասնաձյուղի և «Սևան երիտասարդական ակումբ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչները, և Համալսարանական կրթությանը կանանց Սոցիալազգային Արարատի մարզի Արաշատի մասնաձյուղի, «Հայրուր» սոցիալ-տնտեսական և մշակութային հասարակական կազմակերպության, Հայաստանի հանրապետական և «Օրինաց Երկիր» կուսակցությունների ու «Շանթ» հեռուստաընկերության ներկայացուցիչների կողմից իրականացվող «Քաղաքացիական նախաձեռնությունները՝ որպես հասարակության ժողովրդավարացման և քաղաքացիական հասարակու-



«ՄՏԱՑԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐ ԳԱՐՉԱՆ ԻՆՔՆԱՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ, ՆՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԳՐՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ»

ԼԻԴԵՐՈՒԹՅԱՆ ԳՊՐՈՅԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

ԳԻՏԱԿՑԱՐԱՐ ԸՆՏՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՅ



հասցնելու, առաջընթաց քայլ կատարելու ձգտումը:

Կուսակցական գործունեության ընթացքում էր, որ հանդիպելով Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի փորձառու ղեկավարին՝ կարողություններս վերագնահատելու նոր հնարավորություն ունեցա: Լինելով Ասոցիացիայի լիդերության դպրոցի շրջանավարտ՝ հանդավեցի, որ Ասոցիացիան իր ղեկավարի եռանդի շնորհիվ հնարավոր բոլոր մեխանիզմներն օգտագործում է մի նպատակի՝ հասնելու հասարակության մեջ կնոջ դերի ամրապնդման, կանանց քաղաքական ակտիվության բարձրացման և զենդերային մշակույթի արմատավորման: Համոզված կարող եմ ասել, որ հանրապետությունում չեն հանդիպել մի ուրիշ կազմակերպության, որ այսչափ նվիրումով ու սրտացավ տրվի կնոջն արժևորելու, սատարելու գործին:

Ասոցիացիայի գործունեությունը հոգեհարազատ համարելով՝ գիտակցաբար ընտրեցի ճանապարհս, համալրեցի Ասոցիացիայի նվիրյալների շարքերը: Շուրջ երեք տարի Երևանում և ՀՀ մարզերում «Ընդդեմ զենդերային բռնության Հայաստանում» թեմայով իրազեկման հանդիպումներում պարզաբանել եմ «բռնություն» երևույթի հոգեբանական և ֆիզիկական ծանր հետևանքներն ու դրանց

կանխարգելմանն ուղղված քայլերը: Այս տարիների աշխատանքիս վերլուծության արդյունքում հանդավեցի, որ մեր հասարակությունը զենդերային դաստիարակության խիստ կարիք ունի, և իրազեկման մեկօրյա սեմինարներն անգամ էապես կարող են փոխել շատերի պատկերացումները:

Համոզված եմ, որ մտածելով ապագա սերնդի մասին և առաջնորդվելով «պետության արժեքը մարդն է» կարգախոսով՝ Ասոցիացիան իր հետագա գործունեությամբ կշարունակի նպաստել երիտասարդ սերնդի դաստիարակությանը, լայնախոհ, պատասխանատու և ակտիվ քաղաքացիների ձևավորմանը:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի անմնացորդ նվիրումը լավագույնս հատուցվել է տարիների ընթացքում ձեռք բերված հարգանքով: Բազում օրենսդրական նախաձեռնությունները, իրազեկման հանդիպումները Հայաստանի ողջ տարածքում, միջազգային կառույցների հետ սերտ համագործակցությունը վստահություն և հավատ են ներշնչել Ասոցիացիայի նկատմամբ:

Լիանա Ղազարյան

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի ներքին ստորիտի բաժնի գլխավոր մասնագետ

Կանայք կազմում են մեծահասակ բնակչության և ընտրազանգվածի ավելի քան կեսը: Պետք է խոստովանել, սակայն, որ հասարակական գործերում նրանց մասնակցության մակարդակը դա չի արտացոլում: Ժողովրդավարությունը սոսկ ձգտում կմնա, եթե քաղաքացիների մեծ խմբեր օտարվեն հասարակական գործերին մասնակցելուց: Սա յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակության գլխավոր մարտահրավերներից մեկն է:

Յանեզ Լենարչիչ

ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի տնօրեն, դեսպան



XXI ԴԱՐՈՒՄ ՈՐՈՇԻՉ Է ԴԱՌՆՈՒՄ ԳԻՏԵԼԻՔԸ



Այսօր, առավել քան երբևէ, կարևորվում է կրթության՝ որպես սոցիալական երևույթի իրականացման խնդիրը: Երրորդ հազարամյակը նշանավորվում է մի շարք խորքային փոփոխություններով, որոնք տեղի են ունենում հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում:

Եթե նախորդ հարյուրամյակը նշանավորվեց աննախադեպ տեխնիկական և տեխնոլոգիական զարգացմամբ, ապա XXI դարը՝ անցումով դեպի տեղեկատվական հասարակություն, որտեղ որոշիչ են գիտելիքների ստեղծումն ու տարածումը:

Հայացք նետելով մեր ձեռքբերումներին և այն ճանապարհին, որ դեռ պետք է անցնենք, ուզում ենք ասել, որ ինձ համար մեծ պատիվ է եղել մասնագիտական այնպիսի բարձր մակարդակի գործընկերների հետ աշխատելը, որոնք իրենց մեծ նվիրումն են բերել Հայաստանում մասնագիտական կրթության բարեփոխման գործընթացին:

Կյանքի ընթացքում սովորելու անհրաժեշտության գաղափարը, որին շատերս ենք հավատում, հաճախ է համակում մեզ: 2010 թ. պատիվ են ունեցել մասնակցելու դասընթացների, որոնք նպաստեցին ոչ միայն իմ կրթական մակարդակի բարձրացմանը, այլև սեփական անձի նկատմամբ հավատի ու վստահության ձևավորմանը, համարձակությանը:

Այդ շնորհակալ աշխատանքի ակունքում կանգնած էր Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան: Նրա շրջանակներում գործող կանանց լիդերության դպրոցը, որի 25-րդ հոսքի շրջանավարտներից են, ինձ համար եղավ կյանքի մեծ դպրոց: Ես

ստացա ոչ միայն համակարգված գիտելիքներ, այլև ձեռք բերեցի այնպիսի կարողություններ և հմտություններ, որոնք ինձ շատ անհրաժեշտ էին թե՛ մասնագիտական և թե՛ մարդկային առումներով:

Դասընթացի կազմակերպիչների անդադրում աշխատանքը մեծ հարգանք է առաջացրել ինչպես իմ, այնպես էլ ինձ հետ վերապատրաստում անցած ընկերներիս շրջանում:

Դասընթացների մակարդակը, կազմակերպվածությունը, ինչպես նաև կազմակերպիչների նվիրվածությունն այդ գործին մեզ հուսադրում է, որ դրանք շարունակական կլինեն և կնպաստեն կանանց ինքնագիտակցության բարձրացմանը, քաղաքացիական ակտիվությանը և ներգրավմանը հասարակական գործընթացներում:

Մարիամ Մարտիկյան
Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կադրերի վերապատրաստման և մասնագիտական ուսուցման բաժնի առաջատար մասնագետ

ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԱՏԱՆԱԼՈՒ ԱՆՆԱԽԱԴԵՊ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Մարդկության պատմության բոլոր ժամանակներին բնորոշ, ժանանակակից աշխարհում նոր թափ ստացած գենդերային խտրականության խնդիրը, որը պայմանավորում և պատճառ է դառնում միջազգային բնույթի հանցագործությունների համար (թրաֆիքինգ, մարմնավաճառություն, կանանց ստրկացում և այլն), դրսևորման առանձնահատկություններով առկա է նաև մեր

երկրում: Հաշվի առնելով ազգային սովորույթներն ու ավանդույթները, երևույթների արժևորման բարոյական և իրավական չափորոշիչները, անհրաժեշտ է կիրառել յուրօրինակ մեթոդներ և միջոցներ մեր հասարակության մեջ նշված խնդրի հաղթահարման համար:

Ուրախալի է այն փաստը, որ անկախ ներպետական բազում դժվարություններից՝ կան կազմակերպություններ, որոնք





իրենց քիչ թե շատ հաջողված գործունեությամբ փորձում են նպաստել համամարդկային այդ չարիքների կանխարգելմանը: Նմանատիպ կազմակերպություններից, թերևս, կարող են նշել Համալսարանական

Դա աննախադեպ հնարավորություն էր իմ և, համոզված եմ, բոլոր մասնակիցների համար նշված խնդրի մասին հիմնարար գիտելիքներ ստանալու առումով: Հաշվի առնելով այն փաստը, որ բոլոր ժամանակներում կանայք մեկուսացված են եղել հասարակության կառավարչական ոլորտից, և միայն նոր դարաշրջանում է նախապայմաններ ստեղծվում նախաձեռնողական գործունեությամբ զբաղվելու համար, նմանատիպ միջոցառումները կարևոր խթան են համարում կանանց, հանրային և

թաղրել, որ միայն նմանատիպ ուսուցում ստանալը բավարար է հաջողություններ ունենալու համար, քանզի խնդրի լուծումը ընդհանուրի համատեքստում պահանջում է նաև անձնական յուրահատուկ մոտեցումներ: Ստացած գիտելիքները կողմնորոշիչներ դարձան ինքնահաղթահարման, նոր նպատակների առաջադրման և դրանց իրագործմանը հասնելու մեթոդների կիրառման համար:

Կրկին շնորհակալություն հայտնելով Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիային նախաձեռնության համար՝ հուսով եմ, որ նմանատիպ դասընթացները կլինեն շարունակական և հնարավորություն կընձեռեն առավել մեծ թվով կանանց մասնակից լինելու:



կրթությամբ կանանց ասոցիացիան, որի հիմնադիրներին և անձնակազմին առիթ ունեն երախտիքի խոսքեր ասելու՝ մայիսից մինչև հունիսի վերջը Կոտայքի մարզում կազմակերպած դասընթացների համար:

մասնավոր գործունեության ոլորտներում ղեկավար դեր ստանձնելու և հակառակ սեռից ոչ պակաս պատասխանատվությամբ այն կատարելու համար: Իհարկե, սխալ կլիներ են-

Նաիրա Ծատուրյան
ՀՀ Կոտայքի մարզի Հաիերի պաշտպանության և աջակցության կենտրոնի իրավախորհրդատու

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան երախտագիտություն է հայտնում հեղինակներին հողվածները տրամադրելու համար

«Համալսարանական կրթությամբ կանայք» լրատուի հավելվածը տպագրվում է «Կանանց շարժումը հազարամյակների խաչմերուկում. նոր մարտահրավերներ և ռազմավարություն» ծրագրի շրջանակներում «Քաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի աջակցությամբ

Համարը պատրաստել են
Համարը խմբագրել է
Ձևավորումը՝

Չեմմա Հասրաթյանը, Գայանե Մերոյանը, Իրինա Շահինյանը
Անահիտ Հարությունյանը
Արթուր Բոյախյանի

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
Երևան 0002, Սարյան 22
Հեռ. (374 10) 53-68-02,
Ֆաքս (374 10) 53-67-92
Email: awue.armenia@gmail.com

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ»
հրատարակչության տպարանում:
Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Հեռ. (374 10) 54-49-82, 62-38-63
Էլ.փոստ info@asoghik.am